բաց ի Ս. Սարգսէ միւս այլ եկեղեցիք, բոլորը կամ այդ պարսպածին մէջն եղել են, և կամ պարսպէն եւս դուրս, այլ ոչ քաղաքին կեդրոն տեղը։

Այս եկեղեցին հաւանական է որ յընթացս ութ հարիւր տարիներու՝ շատ անգամ նորոգուելով, այլայլութիւններ կրած է, այլ գլխաւոր մասն եկեղեցւոյն՝ բեմն և դաս, նոյն հին ձևով մնացել են, ոչ միայն ներքին կողմէն, այլ նոյնպէս և արտաքին տեսքով. քանզի դրսէն եկեղեցւոյս պատին վրայ ագուցած քանի մի խաչքարինք՝ բոլորովին մաշուած են օդէն և անձրևներէն, և որոց վրայի տառերը սրբուած, որ մեծ հնութեան նշան է։ Հայոցմէ վերջ Գենուացիք, ոտից կռուան գտնելով, կամ յաւ եւս՝ տիրանալով Կաֆայի, Ս. Սարգսի անմիջապէս մօտ, քաղաքին մեծ հրապարակին միջավայրը կը շինեն իրենց փառահեղ մայր եկեղեցին, ի պատիւ Ս. Լեգեռ կուսին, որ ըստ վկայելոյ պատմագրաց, իր գեղեցկութեամբ նշանաւոր եղած է ընդ համօրէն Եւրոպա. հաւանական է որ՝ նախ քան զԳենուացիս, Յոյնք նոյն հրապարակին վրայ ունեցել են իրենց եկեղեցին, յետ Գենուացւոց՝ Թուրք գմբեթազարդ և փառաւոր մզկիթ կանգնել են Ս. Աղնէս եկեղեցւոյն հիման վրայ, նոյն տաճարին աւերակներով. իսկ մեր օրեր՝ Ռուսք՝ ճիշդ այդ մզկիթին տեղ, հին եկեղեցւոյն հիման վերայ շինեցին իրենց մայր եկեղեցին։

Ինչպէս տեսանք՝ ի հոլովել դարուց և ի փոփոխել տիրապետող ազգաց, եկեղեցւոյն տեղը բռնած է մզկիթ, և ապա դարձեալ տեղի տուած է եկեղեցւոյ, քաղաքիս կեդրոնին վերայ. մինչդեռ